Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 8

Ք. Երևան, 23 օգոստոսի, 2023 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (Խորհուրդ) արտահերթ նիստի վերաբերյալ

Խորհրդի նիստին մասնակցում են՝

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա.Դանիելյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Շիրվանյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Պետրոսյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)
Վ.Ուռուտյան - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Հայրապետյան – Տեսչական մարմնի ղեկավար (առանց քվեարկության իրավունքի)
Է. Բասենցյան - Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ

Չէին մասնակցում՝
Վ. Քերոբյան- ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ.Բալյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Հրավիրված են՝
Ս.Ծառուկյան - Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Վ.Հարությունյան - Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Դ.Կարապետյան - Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ա. Բաբայան – «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն
Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ
Մ. Երիցյան - Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ

Ողջունելով ներկաներին՝ Ա.Շիրվանյանը հայտնեց, որ խորհրդի նախագահի որոշման համաձայն նիստը վարելու է ինքը:

Ա.Շիրվանյանը փաստեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը:

Ա.Դանիելյանն առաջարկեց օրակարգի հարցերի հերթականությունը փոփոխել:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայներով հաստատվեց օրակարգը՝ հարցերի հետևյալ հերթականությամբ՝

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքների ներկայացում:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 16 որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություններ կատարելու մասին /Ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություններ կատարելու՝ կառավարման խորհրդի որոշումն ընդունվելուց հետո, այն կներկայացվի ՀՀ Վարչապետի համաձայնեցմանը/:

3. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի 2023 թվականի ապրիլի 5-ի N 4 արձանագրության կատարումն ապահովվելու նպատակով տեղեկատվության ներկայացում:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքների ներկայացում:

(Ա. Հայրապետյան , Ա.. Մկրտչյան, Լ. Նանուշյան, Ա.Դանիելյան, Ա. Պետրոսյան, Ա.Շիրվանյան)

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Ա.Մկրտչյանը մանրամասն ներկայացրեց Տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները:

Խորհրդի անդամները հետաքրքրվեցին աղյուսակներում առկա ցուցանիշների նախորդ տարվա համեմատ տատանումների և առաջարկեցին 3-օրյա ժամկետում խորհրդին գրավոր ներկայացել նախորդ տարվա ցուցանիշների համեմատ զգալի շեղումները և միջինից շեղումները:

Ա.Շիրվանյանի կողմից բարձրացվեց անասնաշուկաների նկատմամբ իրականացվող վերահսկողության հետ կապված խնդիրները: Հատկապես ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ անասնաշուկաներում վաճառվում են առանց համարակալման և ուղեկցող փաստաթղթերի առկայության կենդանիներ, որի արդյունքում հնարավոր չէ ապահովել հետագծելիությունը: Արձանագրվեց, որ անասնաշուկաներում ստուգում իրականացնել հնարավոր չէ, քանի որ հաստատված չէ համապատասխան ստուգաթերթ:

Ա.Հայրապետյանը հայտնեց, որ Տեսչական մարմնի կողմից վերահսկողություն իրականացվել է անասնաշուկաներում օրենսդրության շրջանակներում, որի արդյունքների մասին տեղեկացվել է: Միաժամանակ շեշտեց, որ գործող օրենսդրության շրջանակը լայն չէ և լիարժեք վերահսկողություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել օրենդրական փոփոխություններ:

Ա.Հայրապետյանը խնդրեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվեն վերահսկողության հարցերի շրջանակները՝ հաշվի առնելով դրանց կիրառելիությունը:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայներով որոշվեց հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 16 որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություններ կատարելու մասին /Ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություններ կատարելու՝ կառավարման խորհրդի որոշումն ընդունվելուց հետո, այն կներկայացվի ՀՀ Վարչապետի համաձայնեցմանը/:

(Ա.Շիրվանյան, Ա. Հայրապետյան, Լ. Նանուշյան, Ա.Դանիելյան)

Ա..Հայրապետյանը ներկայացրեց Տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրի փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում պլանավորված ստուգումները հնարավոր չի եղել իրականացնել տնտեսավարող սուբյեկտների գործունեության ժամանակավոր դադարեցման, գործունեության դադարեցման, լուծարման, սնանկ ճանաչման, գործունեության ոլորտի փոփոխության պատճառով:

Ա. Պետրոսյանը հետաքրքրվեց ստուգումների ընդհանուր թվի մեջ բողոքների հիման վրա իրականացված ստուգումների համեմատականը: Ա. Մկրտչյանը հայտնեց, որ 2023 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է 221 ստուգում, իսկ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակը 131 է, այդ թվում դիմում բողոքների հիման վրա իրականացված:

Ա.Դանիելյանն հետաքրքրվեց պլանավորված և ոչ պլանավորված ստուգումների խախտումների քանակների վերաբերյալ վերլուծության առկայությամբ: Ա.Մկրտչյանը հայտնեց, որ այս պահին վերլուծություն առկա չէ:

Լ. Նանուշյան բարձրաձայնեց Տեսչական մարմինների կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություններում առկա և վերհանված խնդիրները, որը Խորհրդի կողմից մանրամասն քննարկվեց: Ա.Դանիելյանը հայտնեց, որ մեթոդաբանությունները արդեն իսկ լրամշակված են, սակայն կիրառության ընթացքում ևս կարող է վերանայման անհրաժեշտություն առաջանալ:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայներով որոշվեց հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 16 որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխությունները՝ ՀՀ վարչապետի համաձայնությունը ստանալու պայմանով:

Խորհրդի կողմից մանրամասն քննարկվեց սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, արտադրողի (պատրաստողը) կողմից վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP-Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի մշակումը, իրականացումը և պահպանումը: Խորհուրդը որոշեց հարցը ներառել Խորհրդի հաջորդ նիստի օրակարգում:

Ժամանակի սղության պատճառով Խորհուրդը որոշեց Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի 2023 թվականի ապրիլի 5-ի N 4 արձանագրության կատարումն ապահովվելու նպատակով ներկայացվող տեղեկատվությանը լսել հաջորդ նիստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է.ԲԱՍԵՆՑՅԱՆ